

տասի պատուիրանները, դիմեցէք գէպի Նկե-
ղեցի և զօրացէք առաքինութիւններով: Ամեն
անգամ երբ լսում էք կոչնակի ձայնը, յիշե-
ցէք մեր Հայրիկի խօսքերը և օգնեցէք աղ-
քատին: սիրեցէք միմեանց և պաշտեցէք Աս-
տուծոյ ձեր Ս. Նկեղեցում: Ամեն անգամ երբ
լսում էք քահանայի Հայր մեր: յիշեցէք ձեր
պարտերը և դիմեցէք զգլխով գէպի Քրիս-
տոսի կենդանարար Հաղորդութիւնը: Մտա-
ճեցէք: արդեօք ամենքդ էլ այգպէս էք ա-
նում:

Այդ՝ թող մեր ամենիս նշանաբանը լինի
Ս. Գրքի պատուէրը. «Զաւր Աստուած մեր
պաշտեցուք և ձայնի նորա լուսիցուք»: (Յեւ.
Իղ. 24-):

Ը. Տ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՏԱԼՈՅՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՌՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՎԵՐԴՕՆՈՒՄ.



(Շարունակութիւն) *

Բթութիւնն ընդհանրա-
պէս կատարուում էր
Պէտապօցցու եղանա-
կով: Բայց Ֆրէօրէն
ու նրա աշխատակից-
ները մտադիր չէին մա-
տակարարել աշակերտ-
ներին որոշ, զրական գիտութիւն: այլ միայն
զրդել նրանց զործունէութեան առաջացնել
նրանցում նախաձեռնութիւն (ինիցիատիւ) և
ընդունակութիւնների ազատ արտայայտում:
Ֆրէօրէլը կարծում էր, որ եթէ աշակերտե-
րը կանանու որ աշխատանքի սովորեն, լրիւ
կատարեն ամեն մի զործ՝ նրանք վերջացնելով
իրենց ուսումը Քէյլհաուի ուսումնարանում՝

չեն ունենայ սխաւմաւորաբար սովորած զի-
տութիւն: Բայց կեանքի համար պիտանի կլի-
նեն:

Լանգետալը և Միգդէնդօրֆը սկզբում Ֆր-
էօրէլի առաջնորդութեամբ ուսումնասիրեցին
մանկավարժական եղանակները:

1826 թ. Ֆրէօրէլը հրատարակեց «մարդու
կրթութիւնը»: Պիտար է համառօտ բացատ-
րել այդ գրքի մէջ բովանդակած վարդապե-
տութիւնը: Պա մի այնպիսի դիրք է: որ դրժ-
ուար է քննութեան ենթարկել: Ֆրէօրէլի
յարգողները համաձայնում են, որ այդ գրքում
չի յայտնուած մի որոշ սխաւմ: մի բովան-
դակ վարդապետութիւն առում են, որ դա
ուելի անկապ զազաւարների մի հաւաքածու
է: Մեզ թուում է, որ կարելի է այդ գրքում
զեւեղում զլիաւոր զազաւարը ձեւակերպել
հեռեւեալ կերպով, երեք զործիչ տարբեր (fac-
teur) պէտք է զարգացմանը նպաստեն: այն է՝
կրօնը, բնական գիտութիւնները և լեզուն: որ
միացնում է այդ երեք մասերը: որանք նշանա-
կում են 1, Աստուած, 2, բնութիւն, 3, մարդ:

Մարդուն ստեղծել է Աստուած, նա կայ
Աստուծոյ համար և Աստուծոյ շնորհին է
ապրում: այդ պատճառով էլ պէտք է ձգտի
բարձրանալու մինչև Քրիստոսին դաւանելու
աստիճանը: «Ուսումնարանն առում է նա ա-
մենից առաջ պէտք է տայ քրիստոնէական
կրթութիւն: Բնական գիտութիւնների վերա-
բերութեամբ Ֆրէօրէլը խորհուրդ է տալիս
ուսուցիչներին, ծնողներին, որ այդ գիտու-
թիւնները սովորեցնեն ոչ թէ զրբերով, այլ
բնութիւնը զործնական կերպով զննելով—ցու-
ցական ձեւով: Պա ասում է. «Արաւ այնպէս
ինչպէս երեխան է անում: երբ նա մի բան
չը գիտէ՝ հօրը կամ մօրն է հարցնում: դու
էլ անգեկութիւնները ժողովիր մայր բնութիւ-
նից և Հայր Աստուծուց՝ բնութեան մէջ: Ուղ-
ղապէս զիմիւր գէպի այն աղբիւրը, որից ամեն
ինչ բոխում է:»

Ահա թէ նա ի՞նչ է ասում իր երրորդ են-
թադրութեան (զազաւարի) մասին: որ մար-
դուն է վերաբերում: «Կրօնը յայտնում է է-

ութեան մասին րնութիւնն՝ յոժի և զործողութեան մասին, իսկ մարդկային լեզուն խօսում է մարդու մասին՝ ինչպէս որ նա է՝ խօսապէս ։

Ֆրէօրէլը Քէյլհաուէ ուսումնարանը յանձնեց Լանդէապին և Միգգէնգօրֆին, որովհետեւ մտադիր էր մի նոր ուսումնարան բանադու ։ Ֆրէօրէլն իր խօսակցութեանց ժամանակ Արաուգէ փիլիսոփայի հետ ծանօթացել էր Կօմէնիուսի գաղափարների հետ և նրանում ցանկութիւն էր յղացել մասնագիտաբար պարապել փոքր երեխաների կրթութեամբ ։ Հէնց այդ ժամանակ Ֆրէօրէլը սկսեց զբաղուել կրթութեան այդ մասով, որի հետ անբաժան է մնալու նրա անունը ։ Մասին միջոց զործ զրեց այդ միտքը զործնականապէս իրազօրծելու ։ Մի օր զրօններն նա տեսաւ, որ երեխաները թօփ են խաղում այդ բոպէին նրանում մի միտք յղացաւ—երեխան առաջին անգամ յայնում է իր զործունէութիւնը խաղով ։ Թօփը որ գնդաձև է՝ միութեան խորհրդական նշանն է ։ պէտք է որ նա լինի երեխայի առաջին խաղալիքը ։

Գնդակից (թօփից) երեխան կանցնի դէպի խորանարդը, որ առաջին խորհրդական նշան է միութեան ձևափոխութեան մէջ ։ Այդտեղ Ֆրէօրէլը որոշեց կրթութեան մասնաւոր միջոցներ, այն է՝ ընծաները (les dons), պարագանց կերպը և խաղալիքը ։

Ուստի այն հասակում երբ հարկաւոր է հսկել երեխայի առաջին տպաւորութեանց վրայ՝ կարելի է նրան տալ խաղալիքի մի ամբողջ հաւաքածու ։ որ աստիճանաբար դասաւորուած լինելու որ նա կարողանայ իր գեռանդիտակցական և չր զործադրուած ընդունակութիւնները զարմնել բնական թրէնքների վրայ ։ որոնք կառավարում են Ինդերբը և այդ կերպիւ ծանօթացնել նրան աստուածային օրէնքների հետ ։ որոնք հիմքն են ամեն բանի ։ որոնք նրա (երեխայի) զոյութիւնն են հաստատում ։

Ֆրէօրէլի այս գաղափարը կազմում է նրա

մի նոր սկզբնակէտը և նրա զործունէութեան վերջին շրջանը ։

Սկսած 1835 թ. Ֆրէօրէլը հաստատեց վերջիշեալ հիմունքը, որի վրայ նա պէտք է հիմնէր իր յօրինած մանկական կրթութեան եղանակը ։

Ֆրէօրէլն իր բնակութիւնը հաստատեց Բրլանդէնբուրգում, որ հիմնէ իր մտածած ձևի ուսումնարանը և որպէս զի իր մանկավարժական գաղափարները տարածուին՝ սկսեց հրատարակել մի շարքով թերթ՝ հետեւեալ վերնագրով.— « Լիկէք, ապրենք մեր երեխաների համար ։ »

Բլանդէնբուրգում Ֆրէօրէլի ուսումնարանը սկզբում անուանուում էր « փոքր երեխաների ուսումնարան ։ » ինչպէս սովորաբար անուանուում էին բոլոր այդ տեսակ ուսումնարանները ։ Բայց Ֆրէօրէլը ցանկանում էր իր ձևի ուսումնարանին մի առանձին անուն տալ ։ Մաս երկար ժամանակ որոնում էր մի այնպիսի անուն, որ համապատասխանէր նրա գաղափարին ։ Մի օր Միգգէնգօրֆի և մի այլ բարեկամի հետ գնում էր նա Քէյլհաուէից դէպի Բլանդէնբուրգ և իջնելով մի նեղ ձանապարհով ուրտեղից յանկարծ երևում էր գեղեցիկ ձորում՝ զետեղուած Բլանդէնբուրգը, նա որ քայլում էր մտածումների մէջ խորասուզուած՝ յանկարծ կանգնեց, նրա երեսը մի առանձին փայլ ստացաւ ու բարձրաձայն գոչեց.— « զապրիմ ուսումնարանը կանուանուի Մանկական պարտէզ ։ »

Այս ասացումը, ի հարկէ, այլաբանական մտքով պէտք է հասկացուէր ։

Այն ժամանակ, երբ Բլանդէնբուրգի ուսումնարանը մեծ տոկունութեամբ մաքառում էր ամեն տեսակ զօրւարութիւնների դէմ, ընդ տեսաւ Ֆրէօրէլի ամենափոքրիկական շարադրութիւնը « Մօր երգերը ։ »

Այդ միջոցին Ֆրէօրէլը զուշակում էր մի նոր գաղափար, այն է՝ « հակաբարձութեան հաշիւ-բիշիւ » որ հեղեղեան տրամաբանութիւնը արտայայտում է հետեւեալ խօսքերով.— յառաջադրութիւն (these) (գնդակ), հակառակա-

դրութիւն (հակադրութիւն) (antitese) (խորանարդ), համադրութիւն (synthese) (հաշտեցուցիչ) (դրան): Հակառակորդների (այն է գնդի և խորանարդի ձևերի) հաշտութիւնը կարևոր էր Ֆրէօբէլին որպէս իր փիլիսոփայութեան լրացուցիչ մասն: Որպէս զի այս գործնական օրէնքին կարելի լինի տալ մի շօշափելի տեսական արտայայտութիւն՝ նա խորանարդի և գնդի (երկրորդ ընծայ) * վրայ աւելացրեց հաշտեցուցիչ զւանը, որ միացնում է իր մէջ զընդակի և խորանարդի բնաւորութիւնները և ինքը կազմում է այդ երկուսի մէջ համադրութիւնը, այսինքն ներկայացնում է վերոյիշեալ երկու (գնդակ և խորանարդ) առաջին մարմինների միաւորութիւնը:

Ինչպէս վերևը յիշած է՝ երկրորդ ընծան (le don) կազմում են գունդը, զւանը և խորանարդը: Պէտք է ցոյց տալ այն կապը, որ կայ թէ այդ երեք առարկաների մէջ և թէ այն կապը, որ կայ գնդի և թօփի մէջ: Հասկանալի է թէ ի՞նչ կապ կայ այս վերջին երկու խաղաղէքների մէջ: Երբ գունդը թօփի մեծութեան է՝ այն ժամանակ դրանց հաւասարութիւնը, նրմանութիւնը այնքան մեծ է, որ զրանք շատ մօտ են միմեանց: Գնդի հետ բոլորովին հաւասար լինելու համար թօփին հարկաւոր են երկրորդական որպիսութիւնների, զորօր. խիստ հարթութիւն, ծանրութիւն, խփուելուց ձայն արձակելը կարծրութիւն, իսկ գոյն տալը ցանկութեան գործի է: Գունդը պարունակում է թօփի բոլոր որպիսութիւնները, միայն կարծրութիւնն է աւելանում վրան: Այն իրերը, որոնք մի առարկայի հետ ընդհանուր որպիսութիւններ ունին և ունին նաև այնպիսի որպիսութիւններ, որոնք ընդհանուր չեն, զորօր. գունդը և թօփը, Ֆրէօբէլն անուանում է հակադիր—հաւասար առարկաներ (Entgegengetetzt—gleiche): Ու՞մ որ խորթ թուի այս դարձուածքը, նա պէտք է մտաբերէ այն կրթութեան օրէնքը, որ ասում է, թէ՛ յայտնի է հէտ հէտ աշխարհը, այսինքն յայտնից անցիր

դէպի անյայտը՝ գտնելով դրանց մէջ մի կապ, որ թոյլ է տալիս անյայտը հետեցնել յայտնիից: Գլանը նոյնպէս հակադիր—հաւասար է գնդին, որովհետև ունի գնդի նման կոր մակերևոյթ և կարող է զլորուել: Այդ որպիսութեան հետ միասին գլանն ունի ուրիշ որպիսութիւններ, որոնք գնդի որպիսութիւններից տարբեր են և երեսայի հասկացողութեանը և բնականութեանը նոր պաշար են տալիս: Գլանն իր կոր մակերևոյթին կից ունի երկու հարթ մակերևոյթ և երկու կլոր, շրջանաձև եզերք: Եթէ զլանը գնեք իր մի հարթ մակերևոյթներից մէկի վրայ՝ նա անշարժ կմնայ: Այստեղ յայտնի (կոր մակերևոյթ) կցուած է անյայտի (հարթ մակերևոյթ) հետ: Եթէ քննենք խորանարդը՝ կը տեսնենք, որ դա որոշ մօքով նմանում է զլանին, այսինքն ունի մակերևոյթներ և եզերք: Բայց խորանարդն ունի 6 հաւասար հարթ մակերևոյթ, 12 ուղիղ կողեր, 8 անկիւն, որոնք (ընծաների ընթացքին նայելով) երեսայի համար դեռ նորութիւններ են: Ֆրէօբէլի եղանակն այնպէս է կարգաւորուած, որ յայտնիին հետևում է անյայտն, այն է՝ վերոյիշեալ երկրաչափական արդուածները զըրուած են հետևեալ կարգով՝ թօփը, գունդը, զլանը, խորանարդը: Աւելորդ չի լինիլ բացատրել, թէ ինչու գունդը, զլանը և խորանարդը մէկ ընծայի մէջ են զետեղուած: Պրանք երեքն էլ զրուած են մէկ ընծայի մէջ այն պատճառով, որ կարելի լինի ուսուցչին և աշակերտին ցոյց տալ հակառակորդների հաշտութեան օրէնքը: Գունդը և խորանարդը հակադիր են միմեանց և երեսայի համար էլ հակադիր կերևան: Որպէս զի գունդը և խորանարդը հաշտուեն՝ պէտք էր դրանց մէջ գնել մի երրորդ առարկայ, որ կարողանար հաշտեցուցիչ դերը կատարել և այդ հաշտեցուցիչը—զլանն է, որ ունի գնդի և խորանարդի որպիսութիւնները: Այդ նոր մօքին նա մեծ նշանակութիւն էր տալիս և իրեն այդ մօքի ծնողն էր համարում:

Տիկին Մարէնհօլցը պատմում է, որ 1857 թ. ամառը, մի մարդ եկաւ Ֆրէօբէլի մօտ

* Ընծաների մասին յետոյ առանձին առանձին կը խօսենք:

բացատրութիւն խնդրելու նրա մանկավարժական եղանակի մասին: Ֆրէօրէլը սկսեց բացատրել նրան իր փիլիսոփայական եղանակի հիմունքը: Բայց այդ ունկնդիրը ընդհատելով ասաց նրան. «Ես արդէն գիտեմ հակառակորդների հաշտութեան օրէնքը» որովհետեւ դրա մասին Հեգելը խօսել է:—Չորհիտեմ պատասխանեց Ֆրէօրէլը առանց շփոթուելու, թէ Հեգելն ի՞նչ է ասել դրա մասին: Ես երբեք ժամանակ չեմ ունեցել ուսումնասիրելու նրա փիլիսոփայութիւնը: Այդ միտքը ինքնուրոյն կերպով յղացել է իմ մէջ:

Ֆրէօրէլի մահից յետոյ Միլլերհոֆը և տիկին Մարէնհօլցը ցանկանալով իրենց բարեկամի (Ֆրէօրէլի) գերեզմանի վրայ մի այնպիսի խորհրդաւոր արձան կանգնեցնել, որ ներկայացնէր նրա փիլիսոփայութեան հիմնական գաղափարը՝ համաձայնեցին դնել նրա գերեզմանի վրայ նրա երկրորդ ընծայի երկրաչափական երեք մարմինները, այն է՝ խորանարդի վրայ խորհրդաւոր զլանը դնել իսկ սորա վրայ՝ գնդակը:

1844 թ. Ֆրէօրէլը ստիպուած եղաւ փակել Բլանգէրուրգի ուսումնարանը նիւթական միջոցների պակասութեան պատճառով: Նա վճռեց ճանապարհորդել ամբողջ Գերմանեայում և քարոզել իր մանկավարժական գաղափարների մասին: Բայց Գերմանիայում լատինգուներութիւն չը գտաւ:

Ֆրէօրէլը կրկին գնաց Քէյլհաու և երկու ձմեռ շարունակ դասախօսեց իր մանկավարժական եղանակի մասին այն կանանց համար, որոնք ցանկանում էին իրենց երեխաների կրթութեանը նուիրել:

Տիկին Մարէնհօլցի միջնորդութեամբ, որ Ֆրէօրէլի եռանդալից աշակերտուհիներից մէկըն էր Ֆրէօրէլը ստացաւ դուքս Սաքսեն—Մէյնինգենից Մարիենթալի փոքրիկ ամրոցը իր արամադրութեան ներքոյ, ուր և տեղաւորեց իր ուսումնարանը:

Թէպէտեւ Ֆրէօրէլն արդէն 68 տարեկան էր, բայց պահպանել էր իր մէջ երիտասարդական եռանդը և ուրախութեամբ ղեկավարում էր մանկական պարտիզի խաղերը:

Բայց միջոցին Գերմանիայի ամենայն կողմերից դալիս էին երիտասարդ կանայք նրա դասերը լսելու: Տիկին Մարէնհօլցն իրեն ամբողջատէս նուիրել էր Ֆրէօրէլի նոր գաղափարը տարածելուն և նրան յաջողուեց հետաքրքրել աղջեցուցութիւն ունեցող շատ անձանց: Ամեն ինչ նպատուած էր նրան, բայց յանկարծ պարզ երկնքից կայծակ թափեց—Սոստոսի 7-ին պրուսացւոց կրթութեան նախարարը—Բրունէրը արգելեց պրուսացւոց թագաւորութեան սահմաններում հիմնել մանկական պարտիզներ: Այդ արգելքը շարունակուեց մինչև 1860 թ. Ֆրէօրէլը դրանով շատ վիրաւորուեց, բայց չկորցրեց եռանդը և Մարիենթալում աւելի մեծ աշխուժով սկսեց աշխատել կրթութեան գործի համար: Նա անցրեց 1851—1852 թ. իր աշակերտների հետ, որոնք նրան երկրպագում էին: 1852 թ. յունիսի 6-ին հիւանդացաւ և վախճանուեց նոյն ամի յունիսի 21-ին:

Տիկին Մարէնհօլցը, որ 3 տարի շարունակ ուսել էր Ֆրէօրէլի մօտ և նրա ամենասիրելի աշակերտուհին էր, ընդունեց ուսումնարանի տեսչութիւնը: Այդ կիներ էր, որ վերջին 30 տարուան ընթացքում իր ամբողջ հոգով աշխատեց տարածելու այդ մեծ մարդու գաղափարները, Պէտք է երախտագէտ լինել այդ կնոջ, որ զրեց մանկական պարտիզին վերաբերեալ ամենալաւ դրբերը:

1855 թ. տիկին Մարէնհօլցը գնաց Պարիզ, ուր մնաց 2 տարի: Այդտեղ նա զանազան հասարակութեանց մէջ մեծ համակրութիւն գտաւ: Պարիզի որբանոցների կենդրոնական ժողովը, որի նախագահը ինքը կայսրուհին էր, ընդունեց նրա առաջարկութիւնը և կարգադրեց, որ նա փորձնական դասեր տայ որբանոցում որ կառավարում էր տիկին Պապ—Քարպանտին: Նա համահաւասար կերպով զրաւեց մի քանի յայտնի անձանց նաև փիլիսոփայ Կոնտի ուշադրութիւնը: 1856 թ. Պարիզում կազմուեց մանկական պարտիզների պահապան մի ընկերութիւն, որ մանկական պարտիզներ հիմնեց և ուր պէտք է դորձա-

գրէին Ֆրէօբէլի մանկավարժական գաղափարները:

1857 թ. տիկին Մարէն-Հօլցը ներկայացրեց միջազգային բարեգործական համաժողովին, որ դումարուել էր Ֆրանկֆուրտում (Մայնի վրայ) մի աշխատութիւն, որ տպագրուեց հետեւեալ վերնագրով. «Տիկին Բարօնուհի Մարէն-Հօլցը ներկայացնում է Ֆրանկֆուրտի համաժողովին մանկական պարտեզը»:

Հետեւեալ տարւում նա գնաց Բէլգիա, Հօլլանդիա, ուր մեծ համակրութիւն գտաւ: Տիկին Մարէն-Հօլցի ազդեցութեամբ Բելգիական մատենադիր Եակօբսը գրեց Ֆրանսերէն լեզուով մանկական պարտիզի գասագիրք վարժուհիների և մայրերի համար: Այդ միջոցին պարոն Կոմբրիւզը հրատարակեց Ֆրէօբէլի երկու գլխաւոր շարադրութիւնների թարգմանութիւնները «Մօր դրոյցները» և «Մարդու կրթութիւնը»:

1859 թ. տիկին Մարէն-Հօլցը գնաց Ալզաս Ֆրանսիական Զուիցարիա և 1860 թ. դասախօսեց ժընէվում, Լօզանում, Մէուշաուէլում և այլ քաղաքներում: Որանից յետոյ Զուիցարիայում սկսեցին հիմնել մանկական պարտեզներ և ի միջի այլոց տիկին Հօրտուզայը հիմնեց ժընէվում այն յայտնի մանկական պարտեզը, որ մինչև այժմ գոյութիւն ունի վերակացութեամբ նրա մի աշակերտուհու:

Տիկին Մարէն-Հօլցի անխոնջ աշխատութեամբ ստացուեց այն արդիւնքը, որ այսօր տեսնում ենք: Մրա ծանապարհորդութիւնները շատ նպաստեցին ծանօթացնելու ղիտնականներին մանկական պարտիզի նշանակութեան հետ: Մրան յաջողեց հիմնել Բերլինում առաջին ընկերութիւնը, որ յանձն առաւ իրագործել Ֆրէօբէլի գաղափարները: Կարճ միջոցում այդ գաղափարները տարածուեցին մեծազոյն քաղաքներում և Բէրլինում հիմնուեց մանկական պարտիզի վարժուհիների համար մի մեծ վարժապետանոց:

1871 թ. տիկին Մարէն-Հօլցը պրօֆէսոր ֆիլիտէի (փիլիսոփայի որդին) և պ. Լէօն

Հարդիի օգնութեամբ հիմնեց Ուրէզգէնում «Կրթութեան ընդհանուր ընկերութիւնը» (Allgemeiner Erziehungsverin), որ պէտք է ծառայէր որպէս կեդրոն:

Պիժուար է վիճակագրական տեղեկութիւններ տալ մանկական պարտեզների վերաբերութեամբ, որովհետև այդ ուսումնարանների մեծամասնութիւնը մասնաւոր էր, այդ պատճառով պաշտօնական տեղեկութիւնները՝ շատ չնչին էին: Կարելի է միայն ասել, որ 1875 թ. Հանշմանն իր գրքում «Ֆրիդրիխ Ֆրէօբէլ» ցոյց է տալիս 170 քաղաք Եւրոպայում և Ամերիկայում, որոնցից իւրաքանչիւրում կային մէկ կամ մի քանի մանկական պարտեզներ:

Զուիցարիայում 1881 թ. այդ ուսումնարանների թիւը հասնում էր 180-ի: Առաջնորդների կրթութեան զիւանն յայտնեց, որ 1886 թ. Ամերիկայի միացեալ Նահանգներում կային 524 մանկական պարտեզներ:

Պէտք է մի քանի խօսք ասել թէ մանկավարժները ինչպէս էին վերաբերուում զէպիքրիստոնէութիւնը:

Աւետարանն ներկայացնում է Քրիստոսին որպէս երեխաների բարեկամ: Սա ասում է, քանի որ երեխաները փոքր են, պէտք է խնայամել նրանց մանկավարժական տեսակետից: Եւր Սա օրհնում էր երեխաներին՝ ցանկանում էր նրանց ֆիզիքական, մտաւոր, բարոյական, կրօնական բարգաւաճումն: Քրիստոս ինքն ասում էր, որ չկայ աւելի ազնիւ և արժանաւոր պարապմունք՝ քան երեխաների մասին հոգալը: Սա ասում է երկնային թագաւորութիւնը կը նմանին երեխաներին, այսինքն զիտմամբ մեղք չեն գործի, կը լինին բարի, ազնիւ, աշխատասէր:

Կրթութեան դործում հէնց այդ քրիստոնէական գաղափարներին էին հետեւում Ֆրէօբէլի աշակերտները և աշխատում էին սովորեցնել երեխաներին աստուածապաշտութեան:

Աւետարանն արծարծում է նոյնպէս անձնական ազատութեան և բարեգործութեան

զաղափարները նա պահանջում է, որ ամեն մարդ կատարէ՝ ինչ որ ուղիղ է, բարի է, որովհետեւ այդ զաղափարները տանում են դէպի անձնական ազատութիւնը:

Մանկավարժներն աշխատում էին երեխաների մէջ զարգացնել անձնական ազատութեան և բարութեան սկզբունքն, ազնուացնել երեխայի ձգտումները, զարգացնել նրա բոլոր ընդունակութիւնները և հաստատ կամքի տէր դարձնել: Երեխայական ամեն մի գործում, ձգտման մէջ, պէտք է կարողանալ հասկացնել բարին, ազնիւը, որպէս զի ժամանակով նա բարի պտուղներ տայ: Ամեն ինչ պէտք է կատարուի առաքինութեան համար և առաքինութեամբ, ահա այդ է ուղիղ Աստուածապաշտութիւնը, որ քարոզում էին Գրէօրէէական ուսումնարաններում:

ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԵՆԵԱՆ,

(Կը շարունակուի):



ԱՂՔԱՏ ԱՇԽԱՏՏԱՅ ՄՆՈՒՆՊ.



Երոպական պետութիւնները մեծ ջանք գործ դնելով ժողովրդի բոլոր խաւերի մէջ ուսումն տարածելու և աշխատելով պարտադիր ուսումը դիւրացնելու, մեծապէս մրցում են իրար հետ աղքատ աշակերտների նաև սնունդ մատակարարելով, գերմանական «Բերլիներ Տագերլատ» թերթը մի գեղեցիկ տեղեկութիւն է տալիս այդ մրցման վերաբերմամբ: Աղքատ աշակերտներին սնուցանելու առաջին հաստատու-

թիւնը բացուեց Ֆրանսիայում, որին հետեւեցին Գերմանիան և Գանիան, ապա և Զուիցարիան. իսկ Աւստրիան և Բելգիան հազիւ 3 տարի առաջ շարժուեցան համակրութեամբ դէպի այդ մեծ գործը: Այժմ ուրիշ գործ այնքան չգրաւեց հասարակութեան մտքերը առանց կուսակցական խտրութեանց, որքան աղքատ աշակերտաց սովից ազատելու խնդիրը: Մանկական քնքոյշ հասակում առողջ սնունդն անհրաժեշտ է, որպէս զի ամրանայ մարմինը, որպէս զի եռանդի պակասութիւն չլինի հոգեւոր պահանջները հոգալու համար և որ պակասաւոր սնունդից չվնասուի յետոյ մարմնական առողջութիւնը: Այսպիսով այս խնդիրը վերաբերում է նաև ժողովրդի ապագայ դրութեան, ուստի և ամեն կերպ աշխատում են աշակերտների սնունդը կանոնաւորելու: Մեծ քաղաքներում կարիքն աւելի մեծ է և այդ ջանքերը լինում են առաւել շատ, մանաւանդ որ այդ տեղերում հարուստների և աղքատների հակադրութիւնը շատ զգալի է: Եթէ բարեգործական ընկերութիւնները չլինէին, կոպենհագենում 5,000 ի չափ երթեւեկ աշակերտներ սովի մէջ կլինէին. Բերլինում 1891 թ. ձմեռը 7,000 երեխայ են սնուցել, Պարիզում այդ թիւը հասնում է 13000 ի, Վեննայում 3,000 ի, Բրիւսելում 1,500 ի, Բագելում 850 ի, Պրագայում 750 ի և այլն: Անշուշտ այս թուերը թերի են, վասն զի շատ ծնողներ յանձն չեն առնում որ անկարող են իւրեանց որդիներին սնուցանելու: Բայց որտեղ ամաչկոտութիւնը վիակում է ծնողների բերանն, այնտեղ գեղեցկաբարձառ վկայութիւններ են երեխայոց սպրտնած երեսները: Նկատելի է, որ մասնաւոր բարեգործութիւններից է արուել այս գործի առաջի քայլը, և միայն այն ժամանակ է հասարակութեան օգնութեան գիմել, երբ պահանջի զօրանալուն պատճառով միջոցները պակասում էին: Հասարակութիւնը սիրով օգնում էին, սակայն ոչ մի տեղ չէին մտածում խնդրելու պետութեան օգնութիւնը, թէ և